



Զրիմուռային լուծույթ

Stim Pure AA Liquid

Վան իպերենի Stim Pure AA Liquid-ը բարձր մաքրությամբ ու բարձր խտությամբ հեղուկ կենսաբանական խթանիչ է՝ *Ascophyllum nodosum* ջրիմուռի հիմքով: Այն կայուն լուծույթ է, և խորհուրդ է տրվում կիրառել բույսի աճի տարբեր փուլերում: *Ascophyllum nodosum* ջրիմուռը մշտապես ենթարկվում է մակընթացության ու տեղատվության կարողանում է գոյատևել բարձր աղայնությամբ միջավայրում: Stim Pure AA Liquid-ը կանադական այս ջրիմուռի ստրեսադիմացկուն հատկությունները փոխանցում է բույսին: Stim Pure AA Liquid-ը առանձնահատուկ է *Ascophyllum nodosum*-ի վերամշակման յուրահատուկ մեթոդով և բարձր կայունությամբ՝ անկախ բերքահավաքի սեզոնից:



Բաղադրություն (%w/w)

Ընդհանուր ազոտ	2%
Ուռեիկ ազոտ	1%
Կալիումի օքսիդ	5%
Օրգանական հումք	17.5 - 20.1%
Օրգանական ազոտ	1%
Ընդհանուր ամինաթթուներ	6.2%
Զրիմուռի մզվածք	85%
Օրգանական ածխածին	> 8%

Համատեղելիություն

Համատեղելի է այլ պարարտանյութերի հետ բացառությամբ կալցիումական պարարտանյութերի:

Հետևաբար, անհրաժեշտ է օգտագործել առանձին բաք, կամ պարարտանյութերը պետք է կիրառել տարբեր ժամանակահատվածներում:

Բաքի լուծույթի pH-ը պետք է լինի 4-ից բարձր:



Մեծացնում է բույսի ներուժը՝ աբիոտիկ ստրեսի դեպքում, նպաստում է արմատային համակարգի աճին, պտուղների ձևավորմանը, բարձրացնում է բույսի կենսունակությունն ու առողջությունը



Հեշտ կիրառելի է



Կիրառվում է կաթիլային ոռոգման և տերևային սնուցման միջոցով՝ ջերմատներում և բաց գրունտում: Արդյունավետ է նաև արմատները լուծույթում թաթախելու տարբերակով կիրառման դեպքում



Չի փաստում տերևի հյուսվածքը

Առանձնահատկություններ

- Բարձր խտությամբ լուծույթ
- Դարչնագույն-սև հեղուկ
- 100% բարձրորակ կանադական ջրիմուռ (*Ascophyllum Nodosum*)
- Զրիմուռի վերամշակման յուրահատուկ մեթոդ, որը երաշխավորում է առավելագույն արդյունավետություն

Փաթեթավորում



Ծախսի նորմա
Պարարտացում

Գիտե՞ք արդյոք Van Iperen-ն առաջարկում է ջրիմուռային պարարտանյութերի լայն տեսականի: Այս պարարտանյութերի հիմքում կանադական "Ascophyllum Nodosum" ջրիմուռն է: FoliaStim շարքի հետ համատեղ մշակվել են այլ լուծույթներ և՛ ջերմատներում և բաց գրունտում տերևային սնուցման, կաթիլային ոռոգման և արմատների թաթախման* (տնկումից առաջ) տարբերակով կիրառման համար: Van Iperen-ի Seaweed շարքը «Իպերեն մասնագիտացված պարարտանյութերի» մի մասն են կազմում:

Մշակաբույս	Կիրառման ժամանակահատված	Նվազագույն լ/հա/կիրառում	Առավելագույն լ/հա/կիրառում
Մրգատու ծառեր 	1 - 2- անգամյա կիրառում • Ծաղիկների բողբոջների բացվելու ընթացքում	3	3
Խաղող 	1 - 2- անգամյա կիրառում • Տերևների բողբոջների բացվելուն զուգահեռ	3	3
Բանջարեղեն 	5 - 9- անգամյա կիրառում • Տնկմանը զուգահեռ • Մինչ բերքահավաքը • 10 - 14 օր միջակայքով	2	2
Կարտոֆիլ 	3- անգամյա կիրառում • Տնկելուց հետո 2 շաբաթվա ընթացքում • Պալարի ձևավորման ընթացքում • Պալարի հասունացման ընթացքում	2	2
Կորիզավոր մրգեր 	1 - 2- անգամյա կիրառում • Ծաղիկների բողբոջների բացվելու ընթացքում	3	3





“ԱԳՐՈՏԵՆ” ընկերությունը ջերմատների, ֆերմերների և բուսաբուծական արտադրությունում ներգրավված այլ անձանց մատակարարում է բույսերի մշակութային համար բարձրորակ ապրանքներ, ինչպես նաև այդ բնագավառում տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն:

www.agrotech.am

Van Iperen International հոլանդական ընկերությունն իր գործունեությունը ծավալում է ողջ աշխարհում՝ արտադրելով և մատակարարելով ամենատարբեր մասնագիտացված պարարտանյութեր:

www.vaniperen.com

Ծախսի նորմա
Տերևային սնուցում

Մշակաբույս	Կիրառման ժամանակահատված	Նվազագույն լ/հա/կիրառում	Առավելագույն լ/հա/կիրառում
Մրգատու ծառեր 	5 - 6 - անգամյա կիրառում • Ծաղիկների բողբոջների բացվելու ընթացքում • Մինչև պտղի հասունանալը • Բերքահավաքից հետո	1	2
Խաղող 	5 - 7 - անգամյա կիրառում • Վեգետատիվ աճին զուգահեռ • 7 - 10 օր միջակայքով	1	2
Բանջարեղեն 	3 - 4 - անգամյա կիրառում • Բույսի տնկմանը զուգահեռ • Մինչև պտղի հասունանալը	1	2
Ցիտրուս 	4 - 5- անգամյա կիրառում • Ծաղիկների բողբոջների բացվելու ընթացքում • Մինչև պտղի ձևավորումը	2	3

Տերևային սնուցման դեպքում բույսերի պաշտպանության միջոցների հետ որպես խառնուրդ կիրառելիս անհրաժեշտ է համատեղելիության թեստ անցկացնել խառնուրդը պատրաստելուն զուգընթաց:

Բույսի արմատների թաթախում

*Տնկելուց առաջ երիտասարդ բույսի արմատներն անհրաժեշտ է թաթախել Stim Pure AA լուծույթի մեջ: Սա բույսին ավելի կենսունակ կդարձնի և տնկելուց անմիջապես հետո կբարձրացնի նախնական աճի ներուժը: Բույսերը պետք է 20-25 րոպե պահել 0.5% խտությամբ լուծույթում, որպեսզի լուծույթը հասնի բույսի տերևներին: